

ՀՀ Կրթութեան Եվ Գիտութեան Նախարարութեան  
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱԿՈՒԲ ԳԱՐԻԻ ԿԻՐԱԿՈԶՅԱՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ և ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ  
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԺԳ. 00. 01- «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ»  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բ. Կ. Կարապետյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Մ. Մանուկյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Պ. Առնաուդյան

Առաջատար կազմակերպություն՝

Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. **հուլիսի 2-ին**, ժամը 12<sup>00</sup>-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է **2019 թ.-ի մայիսի 20-ին**:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝

Թ.Յ. Ազատյան

## *ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ*

### *Հետազոտության արդիականությունը*

Վերջին տարիներին մասնագետների, մասնավորապես ուսուցիչների պատրաստման համակարգի արդիականացման միտումներ են նկատվում թե՛ զարգացող, թե՛ զարգացած երկրներում: Դա բացատրվում է նախ և առաջ այն հանգամանքով, որ այդ համակարգի կայացմամբ է պայմանավորված տվյալ երկրի տնտեսության, ընդհանրապես հասարակության շարունակական զարգացումը:

Այդ համատեքստում նպատակահարմար է ուսումնասիրել այն երկրների կրթական համակարգերը, որոնք կարող են նպաստել ՀՀ-ում ուսուցիչների մասնագիտական պատրաստության համակարգի զարգացմանը և որակավորման դասընթացների կազմակերպմանն ու դրանց որակի բարձրացմանը: Ինչպես հայտնի է, զարգացած եվրոպական երկրները, մասնավորապես Մեծ Բրիտանիան, ունեն ուսուցչի պատրաստման հարուստ ավանդույթներ:

Ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրն արդիական է, քանի որ շարունակաբար փոխվում են կրթության բովանդակության բաղադրիչները, կրթության կազմակերպմանն առաջադրվող պահանջները, չափորոշիչները: Դրանք վերանայվում են նոր տեսական և մեթոդաբանական դիրքերից՝ հաշվի առնելով շարունակաբար արդիականացվող կրթության պահանջները:

21-րդ դարի առաջին քառորդում ՀՀ ԿԳ նախարարության և տարբեր բուհերի կողմից հետևողական, համակարգված աշխատանք է տարվում ապագա ուսուցչի պատրաստման դասընթացներն ըստ ժամանակակից պահանջների և մարտահրավերների կազմակերպելու, շարունակաբար բարելավելու համար:

Հայ մանկավարժական հանրությունը փորձ է անում հաշվի առնել զարգացած երկրներում ուսուցչի պատրաստման և վերապատրաստման կուտակված դրական, առաջավոր փորձը և այն ներդնել ՀՀ-ում: Ավելին, խնդիր է դրվում ինտեգրվելով Բոլոնիայի հոչակագիրն ընդունած երկրներին, դառնալ այդ կրթական տարածքի լիարժեք և լիիրավ անդամ: Սակայն ինտեգրումը միշտ չէ, որ ենթադրում է ուսումնասիրել զարգացած

երկրների հարուստ փորձը, համապատասխան տեսությունները, մեթոդաբանական մոտեցումները և յուրացնել այն: Երբեմն հատկապես շտապողականությունը բերում է ոչ գիտակցված, առանց համապատասխան ռեֆլեքսիայի ընդօրինակման, նմանակման: Շատ դեպքերում արտերկրում արդյունավետ համարվող ուսուցչի պատրաստման մոդելներն ուղղակիորեն հնարավոր չէ ներդնել մեր կրթական տարածք, քանի որ դրանց մեթոդաբանական հիմքերը չեն դառնում համապատասխան ռեֆլեքսիվ մակարդակում քննության առարկա: Այդ համատեքստում կարևորվում է կրթական ավանդույթի դերը: Ձևավորվելով տարբեր մենթալ դաշտերում՝ կրթական ավանդույթները պետք է ուսումնասիրել՝ հաշվի առնելով տվյալ երկրի մանկավարժների լեզվական, հոգեբանական, սոցիալ-մշակութային և այլ առանձնահատկությունները: Կարևոր նշանակություն ունի համեմատվող կրթական տարածքների շփումների դինամիկան:

Ուսուցիչների պատրաստման հիմնախնդիրը քննության առարկա է դարձել շարունակական կրթության, կրթության կառավարման, ուսուցման և դաստիարակության նոր տեխնոլոգիաների կիրառման, հումանիստական դաստիարակության տեսանկյունից (В.Б. Гаргай 2001, Р. С. Димухаметов 2006, Е.Н. Соловова 2010 և այլք):

Առանձնանում են ուսուցչի պատրաստմանը և վերապատրաստմանը նվիրված այն աշխատանքները, որոնք իրականացվել են ՀՀ-ում (Հ. Հ. Անդրեասյան 2015, Լ. Ա. Անտոնյան 2007, Լ. Թ. Ասատրյան 2003, Մ. Գ. Աստվածատրյան, Մ.Վ. Ղալաչյան 2012, Ա. Զ. Արնաուդյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խաչատրյան, Ս.Խրիմյան, Ռ.Պետրոսյան 2004, Կ. Վարդանյան 2008, Գ.Թերզյան, Ա.Թորոսյան, Հ.Շարխաթունյան 2004 և այլք):

Արտերկրի մանկավարժական կադրերի պատրաստման հիմնահարցերը քննարկման առարկա են դարձել տարբեր հեղինակների աշխատանքներում (I. Abbott & L. Evans 1994, A. Aguado 2009, T. Augsburg & J. A. de Barros 2010, Cochran-Smith, Marilyn & Susan L. Lytle 1993, M. Hammersley 2012, A. A. Барбарига 1988, Б.Л.Вульфсон 1996, А.Н. Джурицкий 1992, З.А.Малькова 1996 և այլք): Կարևորվում են տարբեր երկրներում մանկավարժական կրթությանը նվիրված աշխատանքները (M. T. Huber, P. Hutchings, & R. Gale 2005, B. Joyce, & M. Weil & E. Calhoun 2003, A. Smithers, P. Robinson 2014, К.Н. Биницкая 2013, Н. М. Авшениук, В. О. Кудин, О. И. Огиенко 2011, О. Ю. Озерская 2006,

Л. П. Полищук 2011, А. О. Роляк 2008, А. А. Сбруева 1999, Л. О. Хомыч 2003, С. И. Шандрюк 2012, Н. М. Щур 2012, 2002 և այլք):

Ուսուցչի պատրաստման հիմնախնդիրը դիտարկվում է ուսուցման և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաների տեսանկյունից (L. A. Daloz 1999, K. M. Kerr, D.R. Schulze, & L.E. Woodward 1995 և այլք):

Մեծ Բրիտանիայում ուսուցչի պատրաստման ռազմավարությունների ուսումնասիրությունը կարող է նպաստել ՀՀ-ում ուսուցչի պատրաստման նոր մոտեցումների ձևավորմանը, արդյունավետ մոդելների ստեղծմանը:

Հետազոտության հիմնախնդիրն արդիական է, քանի որ ուսուցչի պատրաստման ավանդական և ժամանակակից մոդելների համեմատական վերլուծությունը բացահայտում է համամարդկային, ազգամշակութային, միջմշակութային ուղղվածություն ունեցող մոտեցումների առանձնահատկությունները, որոնց ուսումնասիրությունն անհրաժեշտ պայման է համեմատվող կրթական տարածքների միջև երկխոսություն ծավալելու, փոխըմբռնման, ինչպես նաև նոր մոդելների ստեղծման և կիրառման, ուսուցչի պատրաստման արդյունավետ ռազմավարություն մշակելու համար:

***Հետազոտության նպատակն*** է համեմատել Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում ուսուցչի պատրաստման ավանդական և ժամանակակից ռազմավարությունները, վեր հանել դրանց ընդհանուր և տարբերակիչ կողմերը և առաջարկել ավելի արդյունավետ, ՀՀ-ում կիրառելի մոդել:

***Հետազոտության օբյեկտը*** ուսուցչի պատրաստման համակարգն է Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում:

***Հետազոտության առարկան*** Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում ուսուցչի մասնագիտական պատրաստման ռազմավարությունների համեմատական վերլուծությունն է:

### ***Հետազոտության վարկածը***

Ուսուցչի պատրաստման ռազմավարությունների ավանդական և ժամանակակից մոդելների համեմատական վերլուծությունը կարող է հիմք հանդիսանալ ավելի արդյունավետ մոդելի ստեղծման համար, եթե ուսումնասիրվեն և համեմատվեն Մեծ Բրիտանիայի և ՀՀ-ի ուսուցչի պատրաստման մոդելները՝ դրանց ընդհանրությունների և

տարբերությունների, մշակութային, ազգամշակութային, ներմշակութային, խոսութային-մենթալ փոխներթանցման տեսանկյուններից:

***Հետազոտության խնդիրներն են.***

1. Ուսումնասիրել ուսուցչի պատրաստման ռազմավարություններն ու ավանդական և ժամանակակից մոդելները Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում տեսական, մեթոդաբանական, մեթոդական մակարդակներում:

2. Համեմատել մանկավարժության և կրթության փիլիսոփայության հարացույցային տեղաշարժերը Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում, բնութագրել դրանց անդրադարձն ուսուցչի պատրաստման ավանդական և ժամանակակից մոդելների, ռազմավարական մոտեցումների, տեխնոլոգիաների, մեթոդների և հնարների ձևավորման վրա, բացահայտել այդ միտումները:

3. Վերլուծել ուսուցչի պատրաստման ռազմավարությունների, դրանց շրջանակներում ձևավորված մոդելների, մոտեցումների, տեխնոլոգիաների, մեթոդների և հնարների հիմնական բաղադրիչները տեսական, մեթոդաբանական և մեթոդական մակարդակներում:

4. Առաջարկել ուսուցչի պատրաստման ռազմավարությունների հիմնական բնութագրերն արտացոլող մոդելի նախագծման և ստեղծման, ինչպես նաև կիրառման նոր մոտեցում՝ հաշվի առնելով ՀՀ-ի կրթական առանձնահատկությունները:

***Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝***

- կոմպլեքսային (Безюлева 2011, Гиниятова 2015, Курникова 2008, Люботинский 2014, Berman R., Brown & Sean McCartney 1994, Castling 1996, Margaret Reynolds & Matthew Salters 1995, Whitty & Willmott 1991),

- շարունակական կրթության (Акмаева 2003, Гребенкина 2000, Сабирова 2008),

- գործաբանական (Biesta, Gert & Burbules, Nicholas 2002, Graham Badleye 2003, Lin, Hsiu Fen 2012),

- կառուցողական-հումանիստական (Rogers 1967, Rybaleva 2013) տեսությունները և հայեցակարգերը:

### ***Հետազոտության մեթոդները***

Հետազոտության տարբեր փուլերում օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ պատմահամեմատական վերլուծություն, խոսությային-գործաբանական վերլուծություն, հարցում, դիտում, անկետավորում, մշտադիտարկում, հետազոտության արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով.

**Առաջին փուլում (2016-2017թթ.)** հստակեցվել են հետազոտության թեման, հասկացական համակարգը, կատարվել է թեմային վերաբերող մասնագիտական գրականության ուսումնասիրություն:

**Երկրորդ փուլում (2017-2018թթ.)** ուսումնասիրվել են ուսուցչի պատրաստման ավանդական, ժամանակակից ռազմավարություններն ու մոդելները Մեծ Բրիտանիայում և ՀՀ-ում, համեմատվել են դրանց բաղադրիչները, գործառույթները, ձևավորման պատմությունը և միտումները:

**Երրորդ փուլում (2018-2019թթ.)** իրականացվել է առաջարկվող մոդելի ներդրման հնարավորությունները բացահայտելու նպատակով ապագա ուսուցիչների, ուսուցիչների և տնօրենների հարցում:

### ***Հետազոտության գիտական նորույթը***

Ուսուցչի պատրաստման ավանդական և ժամանակակից ռազմավարությունների, դրանց շրջանակներում ձևավորված մոդելների, մոտեցումների, տեխնոլոգիաների, մեթոդների և հնարների, մանկավարժական պրակտիկայի կազմակերպման համեմատական վերլուծության հիման վրա առաջարկվել է ուսուցչի մասնագիտական պատրաստման ռազմավարություն ընտրելու և կիրառելու դինամիկ **մոդել**, որը հնարավորություն է ընձեռում ապահովել կրթության բարձր որակ և ինտեգրվել ժամանակակից զարգացած կրթական համակարգերին:

### ***Հետազոտության տեսական նշանակությունը***

Ուսուցչի պատրաստման ավանդական և ժամանակակից ռազմավարությունների, դրանց շրջանակներում ձևավորված մոդելների համեմատական վերլուծությամբ բացահայտվել և տեսականորեն հիմնավորել են Մեծ Բրիտանիայի և ՀՀ-ի ուսուցչի

պատրաստման ժամանակակից մոտեցումներն ու միտումները, ռազմավարությունները, դրանց ընդհանուր և տարբերակիչ կողմերը, միջգիտական, միջմշակութային, խոսութային-ճանաչողական բնույթի դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:

### ***Հետազոտության գործնական նշանակությունը***

Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել ուսուցչի պատրաստման բուհական համակարգում, ինչպես նաև հետբուհական վերապատրաստման դասընթացներում, դասերի պլանավորման, վերաորակավորման, դասընթացների նախագծման, դասագրքերի, ուսումնամեթոդական գրականության ստեղծման գործընթացում:

### ***Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.***

1. Ուսուցչի պատրաստման համակարգերը ՀՀ-ում և Մեծ Բրիտանիայում թե՛ կառուցվածքով, թե՛ բովանդակությամբ կրթության զարգացման տարբեր փուլերում հիմնականում տարբերվում են: Կրթության ռազմավարությունները համեմատելիս բացահայտվում են համեմատվող կրթական համակարգերի հիմնական տարբերությունները: Կարևոր տարբերությունն այն է, որ ՀՀ-ում փորձ է արվում հաղթահարել խորհրդային կարծրատիպերը, իսկ Մեծ Բրիտանիայում՝ գաղութային կրթական քաղաքականության իրականացման դրսևորումները:

2. Հայ մանկավարժների ուսումնասիրության առարկա պետք է լինի Մեծ Բրիտանիայում շարունակաբար վերամշակվող ուսուցիչների հավաքագրման և ֆինանսավորման տեմպերի ավելացման, մասնագիտական չափորոշիչների շարունակական վերանայման և տեսչական ստուգումների ռեժիմի մեղմացման ռազմավարությունները:

3. Շարունակական կրթության ռազմավարությունը նոր, գործնական հիմքերի վրա է դնում ուսուցչի պատրաստման գործընթացը, որի կիրառման հաջողությամբ է պայմանավորված ուսուցչի պատրաստման նորարարական, այլընտրանքային մոդելների ստեղծումը:



4. Ուսուցչի պատրաստման բրիտանական մոդելներին բնորոշ է մայրենի լեզվի, մշակույթի, կրթական արժեքների պահպանման և այլ երկրներում տարածման քաղաքականությունը: Ուսուցչի պատրաստման հայրենական մոդելի հիմքում ընկած է ազգամշակութային, կրթական արժեքների պահպանման ռազմավարությունը:

***Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն***  
ապահովվում է ուսուցչի պատրաստման բրիտանական և հայկական մոդելների և մոտեցումների, ինչպես նաև տեխնոլոգիաների և ռազմավարությունների ուսումնասիրությամբ, առաջադրվող խնդիրների լուծմամբ, Մեծ Բրիտանիայում իրենց արդյունավետությամբ աչքի ընկած մոդելների ներդրման անհրաժեշտության հիմնավորմամբ:

#### ***Ուսումնասիրության փորձաքննությունը***

Հետազոտության արդյունքները զեկուցվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության, մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոններում:

#### ***Հետազոտության ներդրումը***

Հետազոտության արդյունքները ներդրվել են Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության տեսության և պատմության, մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնների կողմից կազմակերպված տարբեր սեմինարների, քննարկումների ժամանակ: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են վեց հոդվածում (տե՛ս անվանացանկը ատենախոսության սեղմագրի վերջում):

#### ***Հետազոտության կառուցվածքը և ծավալը***

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 130 էջ:

## *ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

**Ներածության** մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Ուսուցչի պատրաստման հիմնախնդիրը Մեծ Բրիտանիայում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

**«Ուսուցչի պատրաստման պատմամշակութային, կրթական նախադրյալները Հայաստանում և Մեծ Բրիտանիայում»** վերնագրով առաջին ենթագլխում ներկայացվում են Հայաստանի և Մեծ Բրիտանիայի դպրոցների համառոտ պատմությունը կրթամշակութային ավանդույթների, մոտեցումների, ռազմավարությունների ձևավորման և զարգացման տեսանկյունից: Քաղաքակրթական մոտեցման տեսանկյունից առանձնացվել են դպրոցի ձևավորման նախաքրիստոնեական և քրիստոնեական փուլերը: Նշվում է, որ համեմատվող կրթական համակարգերին միավորում է գրեթե նույն հոգևոր, մշակութային, կրթական արժեքները և ուսուցչի պատրաստման ռազմավարությունը բացահայտորեն, թե ներակա երկու երկրում էլ մշակում էին եկեղեցականները:

Նշվում է, որ 1970 թվականին վերջանում է մանկավարժական համակարգի էքստենսիվ զարգացումը, այն առումով, որ 1970թ. մինչև 1990թ. սկիզբը համարվում է ուսուցչի պատրաստման ինտենսիվ շրջան:

Վերլուծվում են ուսուցչի պատրաստման նորարարական ռազմավարությունները, որոնք բուռն զարգացում են ապրում ուսուցչի պատրաստման ինտենսիվ շրջանում, որը սկսվում է 1990-ականներին և հասնում է մինչև մեր օրերը:

Առաջին գլխի երկորդ՝ **«Ուսուցչի պատրաստման ժամանակակից միտումները Մեծ Բրիտանիայում»** ենթագլխում բացահայտվում է ուսուցչի պատրաստման հայկական և բրիտանական մոդելների հիմնական տարբերությունները, հաշվի առնելով կոնկրետ ժամանակաշրջանում կրթության զարգացման միտումները: Ռազմավարական մակարդակում բացահայտվում է այն միտումը, ըստ որի Մեծ Բրիտանիայում

շարունակաբար աճում է ընտրովի դասընթացների քանակը: Նշվում է, որ երկու կրթական տարածքին էլ բնորոշ է ուսումնական առարկաների ինտեգրման ռազմավարությունը: Ընդ որում՝ համեմատվող կրթական տիրույթներում նկատվում է հումանիտար առարկաների քանակի ավելացման միտում, որն ուղեկցվում է ուսուցչի պատրաստման գործընթացի վերահսկողության և գնահատման մեթոդների և միջոցների շարունակական բարելավմամբ:

Համապարփակ ուսումնասիրության առարկա պետք է դառնան հնարավորինս «ճկուն» հետբուհական մանկավարժական կրթության ծրագրերը (flexible PGCE), որոնք նախատեսված են դպրոցում աշխատող մանկավարժական փորձ ունեցող մարդկանց համար, ովքեր չեն կարող հաճախել համանման համալսարանական դասընթացների:

Առանձնացվում է ուսուցչի պատրաստման գործընթացում գիտական, հետազոտական աշխատանքի կազմակերպման ռազմավարությունը, որը լայնորեն կիրառվում է Մեծ Բրիտանիայում: Նշվում է, որ ՀՀ-ում այն սկսում են կիրառել 21-րդ դարի առաջին քառորդում:

Վերլուծվում են ուսուցչի պատրաստման մասնագիտական կոմպետենտության և գործնական կարողությունների և հմտությունների ձևավորման մոդելներն ուսուցչի անձնային-մասնագիտական որակների զարգացման տեսանկյունից:

Երրորդ՝ «**Ուսուցչի պատրաստման ծրագրերը Մեծ Բրիտանիայում**» ենթագլխում ներկայացվում է ուսուցչի պատրաստման ծրագրերի շարունակական արդիականացման միտումը: Կրթության կազմակերպման ռազմավարության մակարդակում բացահայտվել են ուսուցչի պատրաստման ժամկետների կրճատման, մասնագիտության ընդլայնման, մանկավարժական մասնագիտությունների հետագա խորացման կամ արհեստավարժեցման, նոր գործնական ուղղվածության երթուղիների մշակման, կարճաժամկետ դասընթացների կազմակերպման միտումները:

Վերլուծվում է «Overseas Trained Teacher programme (OTTP)» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս արտերկրում կրթություն ստացած մասնագետներին վերաորակավորվել դպրոցում աշխատելու ժամանակ: Այդ ծրագրի շրջանակներում հնարավորություն է տրվում ուսուցչին անցնել ատեստացիա և ցույց տալ իր գիտելիքների

համապատասխանությունը նոր մասնագիտական չափորոշիչներին: Գնահատման, ինքնագնահատման ռազմավարության կիրառման վառ օրինակ է թղթապանակի ներդրումը Մեծ Բրիտանիայում, որը որպես գնահատման, ինքնագնահատման գործիք դեռևս ՀՀ կրթական համակարգում ընթացքի մեջ է:

Երկրորդ՝ **«Բրիտանացի ուսուցչի մասնագիտական պատրաստման ռազմավարությունը արդի փուլում»** գլուխն բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Բրիտանացի ուսուցչի պատրաստման բովանդակությունը»** ենթագլուխը ներկայացնում է ուսուցչի պատրաստման մոտեցումները, տեխնոլոգիաները, ռազմավարությունները: Սահմանվում են «կոմպետենտություն», «մասնագիտական կոմպետենտություն» «վերկոմպետենցիա» հասկացությունները: Նույն մակարդակում է դիտարկվում ընթացակարգային կոմպետենցիան, որը վերաբերում է անձի ռազմավարություն կիրառելու, ընթացակարգեր մշակելու միջանձնային շփման հմտություններին:

Հստակորեն սահմանվում է ռեֆլեքսիվ կամ «անդրադարձող գործունեություն ծավալող» հասկացությունը (reflective practitioner), որը համարվում է բրիտանական ուսուցչի կատարելատիպը:

Երկրորդ՝ **«Բրիտանացի ուսուցչի մասնագիտական պատրաստման մոդելները»** ենթագլխում վերլուծվում են Մեծ Բրիտանիայի բուհերում ապագա ուսուցիչների պատրաստման գուգահեռ, հաջորդական և այլընտրանքային մոդելները:

Համեմատական վերլուծությամբ բացահայտվում է, որ ուսուցչի պատրաստման հայկական մոդելներում գործնական-փորձարարական առարկաներին հատկացվող ժամաքանակը միայն վերջերս ունի շարունակական ավելացման միտում, իսկ բրիտանական բուհերում այն սկսվել է ավելի վաղ՝ դեռևս նախորդ դարի 70-80-ական թվականներից:

Բացահայտվում են գործնական կողմնորոշում ունեցող մոդելի առանձնահատկությունները, ինչպես նաև ՀՀ-ում ուսուցչի պատրաստման «դպրոցների հետ համալսարանների գործընկերության» մոդելի կիրառման հնարավորությունները: Կրթության ռազմավարությունները համեմատելիս բացահայտվում են համեմատվող կրթական համակարգերի հիմնական տարբերությունները: Կարևոր տարբերությունն այն է,

որ ՀՀ-ում փորձ է արվում հաղթահարել խորհրդային կարծրատիպերը, իսկ Մեծ Բրիտանիայում մինչև հիմա էլ հաղթահարվում են գաղութային կրթական քաղաքանության միտումները:

Ուսուցչի պատրաստման գործընթացի, վերջնարդյունքերի ստուգման և գնահատման ռազմավարության մշակման տեսանկյունից առանձնացվում են այսպես կոչված երկրորդ սերնդի չափորոշիչները (Qualifying to Teach Professional Standards for QTS and Requirements for ITT, 2001), որոնք ներկայացնում են բրիտանացի ուսուցչի պրոֆեսիոգրամման կամ մասնագիրը:

Երրորդ՝ **«Ուսուցչի մեթոդական կոմպետենտության ձևավորման ուղիները և մեթոդները Մեծ Բրիտանիայում»** ենթագլուխը նվիրված է Մեծ Բրիտանիայում ուսուցչի մեթոդական կոմպետենտության ձևավորման տարբեր հաղորդակցական-ճանաչողական, հաղորդակցական-գործաբանական, ինտեգրատիվ-ռեֆլեքսիվ, կոմպետենտային մոտեցումների շրջանակներում ձևավորված ռազմավարությունների լուսաբանմանը: Վերլուծվում է բրիտանացի ուսուցչի պատրաստման մեթոդական կոմպետենտության արժեքային-մոտիվացիոն բաղադրիչը:

Բացահայտվում են Մեծ Բրիտանիայում ռեֆլեքսիվ կոմպետենտության մակարդակում ուսուցչի պատրաստման գործընթացում մոդելավորման (modeling) և անդրադարձող պրակտիկայի (reflective practice) ռազմավարությունները, ինչպես նաև բրիտանացի ուսուցչի մեթոդական կոմպետենտության ձևավորման տեխնոլոգիաները՝ ֆասիլիտացիա, մենթորություն և այլն: Առանձնացվում են վարքագծային մոդելավորման, փոխաբերական խաղի, նախագծային, զամբյուղի մեթոդները, ինչպես նաև նպատակադրման գործառույթները (գնոստիկ, պլանավորման, բուն մասնագիտական կողմնորոշման, ստուգման):

Երրորդ՝ **«Ուսուցչի պատրաստման հայկական և բրիտանական մոդելների համեմատական վերլուծության մեթոդաբանությունը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Ուսուցչի պատրաստման համակարգի ձևավորման գործընթացը ՀՀ-ում»** ենթագլխում քննության առարկա են դառնում այն հիմնախնդիրները, որոնք ծառայել են արդի փուլում ուսուցչի պատրաստման գործընթացը կազմակերպող կրթության

փորձագետների, մանկավարժության տեսաբանների, մեթոդաբանների, դասախոսների և վերապատրաստող ֆասիլիտատորների առաջ:

Քննության են առնվում ապագա ուսուցչի ընտրության մեթոդները, ձևերը, միջոցները, նրա մասնագիտական նախասիրությունները, հետաքրքրությունները, սովորելու պատրաստակամությունը և ներքին դրդապատճառները, ինչպես նաև մասնագիտական, մեթոդական, հաղորդակցական կոմպետենցիաների տարբերակման, սահմանման և զարգացման հիմնախնդիրները:

Երկրորդ՝ **«Ուսուցչի պատրաստման արդյունավետ մոդելների ներդրման նախադրյալները ՀՀ-ում»** ենթագլխում քննարկում են ուսուցչի պատրաստման վարքի փոփոխության, նորարարական գիտելիքի փոխանցման, հարմարման ուսուցման, ռեֆլեքսիվ, սոցիալ-հոգեբանական կամ ուսուցչի պահանջմունքների բավարարման և այլ մոդելները ՀՀ կրթական համակարգում կիրառելու տեսանկյունից:

Տեսական, մեթոդաբանական և մեթոդական մակարդակներում ներկայացվում է ՀՀ-ում կիրառելու համար առաջարկվող դինամիկ մոդել, դիտարկելով այն շարունակական կրթության համատեքստում:

Երրորդ՝ **«Ուսուցչի պատրաստման հայկական և բրիտանական մոդելների համեմատական վերլուծության չափանիշները և ամփոփիչ տվյալները»** ենթագլխում ներկայացվում են Երևանի շուրջ 16 դպրոցում 160 ուսուցչի և Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի 156 ուսանողի շրջանում իրականացված հարցման արդյունքները: Հարցման նպատակն է եղել բացահայտել ժամանակակից հայ ուսուցչի պատրաստման առանձնահատկությունները, նրանց նպատակադիրքորոշումների, հետաքրքրությունների, պահանջմունքների բովանդակությունը և ուղղվածությունը, որոշել նրանց մասնագիտական, հաղորդակցական, մեթոդական կոմպետենցիաների ձևավորման պայմանները, վեր հանել նրանց մասնագիտական, անձական, սոցիալական բնույթի խնդիրները, նրանց պատկերացումները կրթական համակարգի, մասնագիտական որակների, դասավանդման որակի բարելավման, իրականացվող բարեփոխումների մասին:

Բացահայտվում են ուսուցչի պատրաստման գործընթացի վրա ազդող դրական և բացասական գործոնները: Կարևորվում է նաև մանկավարժական բուհի ուսանողների շրջանում իրականացրած հարցումը, որի նպատակն է պարզել, թե ինչ ռեֆլեքսիվ կոմպետենտության մակարդակ ունեն ապագա ուսուցիչները: Հարցումն անցկացվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարաններում: Ընդհանուր գծերով ներկայացվում է հարցման արդյունքների վերլուծությունը:

### ***Եզրակացություններ***

1. Մեծ Բրիտանիայում ուսուցչի պատրաստման արդյունավետ ռազմավարությունները հնարավոր է ներդնել ՀՀ կրթական տարածք, դրանց մեթոդաբանական հիմքերը համապատասխան ռեֆլեքսիվ մակարդակում ուսումնասիրելուց հետո:
2. Ձևավորվելով այլ մանկավարժական հարացույցի, կրթական ավանդույթների շրջանակներում՝ Մեծ Բրիտանիայում ուսուցչի պատրաստման ռազմավարությունները հետաքրքրություն են ներկայացնում թե՛ ստեղծման մեթոդաբանությամբ, թե՛ իրենց կիրառման տեխնոլոգիաներով:
3. Ուսուցչի պատրաստության համատեքստում ՀՀ հանրակրթական դպրոցը չի շեշտադրում իր պատվիրատու լինելու հանգամանքը: Դպրոց-բուհ համագործակցությունը տեղի է ունենում բուհի, և ոչ թե դպրոցի, նախաձեռնությամբ:
4. Երկու կրթական տարածքին էլ բնորոշ է ուսումնական առարկաների ինտեգրման, ուսուցչի պատրաստման գործընթացի վերահսկողության և գնահատման մեթոդների և միջոցների շարունակական բարելավման ռազմավարությունը:
5. ՀՀ-ի մանկավարժական կադրեր պատրաստող բուհերում ուսուցչի պատրաստության արդյունավետ մոդելի առանցքային բաղադրիչ է գիտական, հետազոտական աշխատանքի կազմակերպման ռազմավարությունը, որը լայնորեն կիրառվում է Մեծ Բրիտանիայում:
6. Մեծ Բրիտանիայում գործում է մանկավարժական կադրերի պատրաստման երեք մոդել՝ դասական, անցումնային և գործնական: Այդ մոդելները, ստեղծված լինելով

այլ մենթալ-կրթական, հանրամշակութային տարածքում, շատ դեպքերում հնարավոր չէ ներդնել, քանի որ 1-ին՝ դրանք ստեղծված են հիմնականում ավելի վաղ ժամանակահատվածում և երբեմն արդիական չեն, 2-րդ՝ չկան դրանք վերլուծելու և հասկանալու անհրաժեշտ մեթոդաբանական հիմքեր և նախադրյալներ, 3-րդ՝ հնարավոր չէ շատ սուղ ժամանակահատվածում հաղթահարել տարբեր կրթական, մանկավարժական խոսույթների փոխներթափանցումը: Հայ մանկավարժներին կարող է հետաքրքրել անցումնային և գործնական մոդելները:

7. Հայ մանկավարժական հանրության համար նորույթ է Մեծ Բրիտանիայում արմատավորված թյուտորական համակարգը, որը ներառում է կուրսդեկությունը, բարոյական դաստիարակությունը /հոգաբարձությունը/: Կարելի է դիտարկել ՀՀ բուհերում թյուտորության դրսևորվման բաղադրիչներ, երբ սովորողներին ներգրավում են հետազոտական աշխատանքի մեջ:
8. Ուսուցչի պատրաստման գործընթացում տարբեր ծրագրերի ներդրման, ծրագրային ուսուցման ռազմավարությունը բնորոշ է ուսուցչ պատրաստման թե՛ բրիտանական, թե՛ հայկական մոդելներին:
9. Մեծ Բրիտանիայում ուսուցչի պատրաստման ռազմավարությունների ուսումնասիրության արդյունքում մշակվել է ուսուցչի պատրաստության արդյունավետ մոդել, որի հիմքում ընկած է ինչպես բրիտանական, այնպես էլ հայկական ուսուցչի պատրաստության ռազմավարությունները և մոդելները:
10. Հաշվի առնելով Մեծ Բրիտանիայի ուսուցչի պատրաստության արդյունավետ ռազմավարությունները, մեր կողմից առաջարկվում է ուսուցչի պատրաստության ժամանակակից մոդելը, որը ներառում է նպատակը, տարբեր ռազմավարություններ և մոդելներ, տեխնոլոգիաներ, գնահատման ձևեր ինչպես նաև ակնկալվող արդյունքները:



*Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում*

1. **Կիրակոջան Հ.** Ուսուցչի պատրաստման ծրագրերը Մեծ Բրիտանիայում, //Մանկավարժական միտք, Եր., 2017, թիվ 3-4, էջ 481-486:
2. **Կիրակոջան Հ.** Ուսուցչի մեթոդական կոմպետենտության ձևավորման ուղիները և մեթոդները Մեծ Բրիտանիայում// Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Եր., 2017, թիվ 2, էջ 49-55:
3. **Կիրակոջան Հ.** Բրիտանացի ուսուցչի մասնագիտական պատրաստման մոդելները// «Մխիթար Գոշ», Վանաձոր, 2017, թիվ 2, էջ 185-190
4. **Կարապետյան Ի., Կիրակոջան Հ.** Ուսուցչի պատրաստման ժամանակակից միտումները Մեծ Բրիտանիայում// Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, 2017/1, էջ 90-95:
5. **Կիրակոջան Հ.** Ուսուցչի պատրաստման համակարգի ձևավորման գործընթացը ՀՀ-ում//Բանբեր Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2018, 2(43), էջ 83-90:
6. **Киракозян А.** «Стратегии подготовки учителя в Великобритании и Республике Армении», «Научный аспект// Гуманитарные науки. - N 2-2019. -#17.

*Киракозян Акоп Гариевич*

*Стратегия профессиональных систем подготовки учителя (сравнительный анализ образовательных систем Республики Армении и Великобритании)*

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - "Теория и история педагогики"

Защита диссертации состоится **2-го июля 2019 г.** в 12<sup>00</sup> на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. ул. Тиграна Меца 17.

***РЕЗЮМЕ***

***Актуальность исследования.*** В первой четверти 21-го века осуществляется последовательная, систематизированная работа со стороны министерства Образования и науки РА и разных вузов по организации курсов подготовки учителя. Армянское педагогическое сообщество то же пытается учесть положительный, передовой опыт подготовки учителя, накопленный в высокоразвитых странах. В этом плане изучение стратегий подготовки учителя в Великобритании может способствовать созданию и применению эффективной модели подготовки учителя в РА.

Проблема исследования является актуальной, так как сравнительный анализ традиционных и современных моделей подготовки учителя может выявить национально-культурные, межкультурные, а также дискурсивно-ментальные проявления подготовки учителя, преодоление которых является необходимым условием осуществления диалога сравниваемых образовательных пространств, взаимопонимания, а также создания и использования эффективных моделей, разработки продуктивной стратегии учителя.

***Целью исследования*** является сравнение традиционных и современных стратегий подготовки учителя во Великобритании, выявление их общих и отличительных черт и разработка более продуктивной модели, которую можно применять в РА.

### ***Задачи исследования:***

1. изучить традиционные и современные стратегии подготовки учителя во Великобритании и РА на теоретическом, методологическом и методическом уровнях,
2. сравнить парадигмальные сдвиги в развитии педагогики и философии образования в Великобритании и РА, охарактеризовать их влияние на формирование традиционных и современных моделей, стратегических подходов, технологий, стратегий, методов и приемов, выявить тенденции их развития,
3. проанализировать основные компоненты стратегий подготовки учителя, модели, подходы, технологии, методы и приемы, формируемые в их рамках на теоретическом, методологическом и методическом уровнях,
4. предложить новый подход к проектированию, созданию и применению модели, отражающий основные характеристики стратегий подготовки учителя, с учетом образовательных особенностей РА.

### ***Научная новизна исследования***

Разработана, на основании сравнительного анализа традиционных и современных стратегий подготовки учителя, моделей, технологий, методов и приемов, формируемых в их рамках, интегральная модель профессиональной подготовки учителя и предложена более оптимальная модель подготовки учителя, применительна к образовательной системе РА на нынешнем этапе.

### ***Теоретическое значение исследования***

Сравнительный анализ традиционных и современных стратегий подготовки учителя, моделей, технологий, методов и приемов, формируемых в их рамках, позволил выявить и теоретически обосновать подходы и тенденции, стратегии подготовки учителя в Великобритании и РА, выделить их общие и отличительные характеристики проявления межкультурной, внутрикультурной, дискурсивно-ментальной интерференции и пути их преодоления.

### ***Практическое значение исследования***

Результаты исследования могут быть внедрены в системе вузовской подготовки

учителя, а также в курсах послевузовской переподготовки, в процессе планирования уроков, проектирования новых курсов, создания учебников, учебно-методической литературы.

#### ***Апробация результатов исследования***

Результаты исследования были представлены на кафедрах профессионального образования и прикладной педагогики, теории и истории педагогики в АГПУ им. Хачатура Абовяна. Результаты проведенного опроса учителей и студентов педагогических вузов РА подтвердили динамичность предложенного подхода к оцениванию и применению эффективных стратегий подготовки учителя.

#### ***Структура и объем диссертационной работы***

Диссертация объемом 130 страниц компьютерного текста состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликовано 6 статей.

*Kirakozyan Hakob Gary*

*The Strategy of Inservice Teaching Systems for Teachers (Comparative Analysis of Educational Systems of the Republic of Armenia and the UK)*

Thesis for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01 –"Theory and History of Pedagogy".

The defense of the thesis will be held at 12<sup>00</sup>, on July 15, 2019 at the session of the Special Board 020 "Pedagogy" HAC (Higher Attestation Commity) to award scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 0010, Tigran Mets 17 ave., Yerevan.

***Summary***

***The relevance of the scientific research.*** In the first quarter of the 21st century consistent, systematic work was carried out by the Ministry of Education and Science of the Republic of Armenia and various universities on organizing teacher training courses. The Armenian pedagogical community is also trying to take into account the positive, advanced experience of teacher training gained in highly developed countries. In this regard, the study of teacher preparation strategies in the UK can contribute to the creation and application of an effective teacher training model in the RA.

The research problem is relevant, as a comparative analysis of traditional and modern models of teacher preparation can reveal national-cultural, intercultural, and also discursive-mental manifestations of teacher preparation, overcoming which is a necessary condition for the dialogue between the compared educational spaces, mutual understanding, creation and use of the effective models, developing a productive teacher training strategy.

***The aim of the research*** is to compare traditional and modern teacher preparation strategies in the UK, identify their common and distinctive features and propose a more productive model that can be applied in Armenia.

***The objectives of the research:***

1. to study traditional and modern strategies for teacher training in the UK and the RA at the theoretical, methodological and methodological levels,

2. to compare paradigmatic shifts in the development of pedagogy and philosophy of education in the UK and the RA, to characterize their influence on the formation of traditional and modern models, strategic approaches, technologies, strategies, methods and techniques, to identify trends in their development,

3. to analyze the main components of teacher preparation strategies, models, approaches, technologies, methods and techniques, formed in their framework at the theoretical, methodological and methodological levels,

4. to propose a new approach to the design, creation and application of a model, reflecting the main characteristics of teacher preparation strategies, taking into account the educational characteristics of the RA.

#### ***The scientific novelty of the research***

Based on a comparative analysis of traditional and modern teacher training strategies, models, technologies, methods and techniques developed within their framework, an integrated and a more optimal model of teacher training is developed for the RA educational system at the current stage.

#### ***The theoretical significance of the research***

The comparative analysis of traditional and modern teacher preparation strategies, models, technologies, methods and techniques formed within their framework, allowed to identify and theoretically substantiate the approaches and trends, teacher training strategies in the UK and the RA, to highlight their common and distinctive characteristics of intercultural, out-cultural, discursive-mental interference and ways to overcome them.

#### ***The practical significance of the research***

The results of the study can be implemented in the system of university teacher training, as well as in postgraduate refresher courses, in the process of planning lessons, designing new courses, creating textbooks, educational and methodical literature.

### ***Approbation of research results***

The results of the research were presented at the departments of Vocational Education and Applied Pedagogy, Theory and History of Pedagogy at the ASPU after Khachatur Abovyan. The results of the survey of teachers and students of pedagogical universities of the Republic of Armenia confirmed the dynamism of the proposed approach to the assessment and application of effective strategies for teacher training.

***The content of the research*** is reflected in the structure of the thesis, which consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and appendices.

Six articles are published on the topic of the thesis.